ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N 412-Ա «16 » փետրվարի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿՑԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 27.05.2022 թվականին կնքված «ԵՔ-ՄԱԾՁԲ-22/62» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Խ.Աբովյանի անվան պուրակի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Ընկերությունը, խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի պահանջներով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի փետրվարի 14-ին և պայմանագիրը փետրվարի 15-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով.

1. «Մեգամետր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

2/16/2023

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ